

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ՔՐԵԱԿՈՒԹԻՒՆ
ՊԵՏԵ Ե ՈՒՂՆԵԼ ԱՌ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի
ԳԱՀԻՐԷ
Նամակատուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL
NOR-OR
CAIRE, B. P. N° 117

Ձեռագիրներն եւ չեն դարձուիր
Արեւմտեւ. Ժ. ՄԻԿԵԼԻՍԷ

ՆՈՐ-ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սեղանակալութիւն ԼՍԱՐԱՆ-ԲՆԹԵՐՅԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐՔԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Գահիրէի համար	Տարեկան,	50
»	Վեցամսեայ	30
Շրջակայից	Տարեկան,	60
»	Վեցամսեայ	35

ԱՐՏԱՍՏՄԱՆԻ ՇԱՄԱՐ

Տարեկան	Փրանկ	18
Վեցամսեայ . . .	»	10

ՌՈՒՍԻՈՅ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱՄԱՐ

Տարեկան	Րուբլի	7
Վեցամսեայ . . .	»	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻ ԿԱՆՈՒԿ Է

ԵՒ ԲԱՐՍԱՐԻ ԾԱՌԱՔԸ

Թերթին Վարչութեանը վրայ է:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՈՐԲԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Ես այսօր ձայն կը բարձրացնեմ ա՛յդ որբերուն համար: Իմացայ որ հայրենասէր Հայ մը Ֆրանսա ապաստանած, Պ. Արշակ Զօպանեան, շատ բարձր բանաստեղծ մը վեհօգի ու գլխոտ, տօն մ'է կազմակերպեր ի նպաստ իր տաշաբաղդ երկրի գեղարդ որբերուն: Ինձի ըսին նաև թէ՛ պաշտօնի տաղանդի տէր կատակերգուհի մը, որ ունի բոլոր շնորհներն իր անձին ու իր սրտին մէջ, Տիկին Ռէթան, այդ տօնին է ընծայեր իր արուեստին հրապոյրը:

Ահա՛ քանի մը սրտաշարժ ծանօթութիւններ այդ որբերու մասին:

« Երկու մանուկներ Գրիէ Խարբերդ եկան, կը գրէ Տօգդ. Պարնըմ, և աղաչեցին զիրենք ընդունիլ որբանոցը: Ո՛չ հայր ունին ո՛չ մայր. անձկագին կը նային աչքերուս մէջ: Ասոնցմէ մին կըսէ.

— « Առ զիս որբանոցդ մէկ տարի միայն, որ կարգաւ սովորիմ ու մարդ ըլլամ. երբէք մարդ չ'պիտի ըլլամ եթէ կարգաւ գրեմ չ'սովորիմ: Միևնոյն տարին պիտի սովորիմ կարկանդակները ալ, և այդ կերպով աղբուսս ճարելը:

« Ա՛լ տեղ չ'կայ մեր որբանոցին մէջ, կ'ա-

ւելցնէ Տօգդ. Պարնըմ. բայց կարելի՞ է ճամբել պղտիկ էակներ ա՛յնչպիսի խոտամուտից, ինչպէս է անի: Զանոնք աղէտքի ու մուրացկանութեան մասնակցու մտածումին՝ սիրտդ չ'դիմանար:

Ամերիկայի առաքեալ մը մեղի կը գրէ Խարբերդէն.

« Այս պղտիկները մարդեր են: Մեր որբերուն մէջ յաճախ կը հանդիպինք ութ ինը տարեկան լաճերու, որոնք ունենալ կը թուին պարտաճանաչութեան զարգուն զգացումը: Մէկ օրինակ տամ մանուկէ մը որ մեր որբանոցին մէջ հանդիստ էր, բայց օր մ'ինձի եկաւ իմացընէլ թէ՛ ալ չ'պիտի կրնար երկար առնի մնալ հոն:

Պէտք է որ, կ'ըսէ, երթամ գործելու, մեծ մայրս սնուցանելու համար:

« Այս մարդուկը՝ ութ տարեկան էր:

« Միևնոյն հասակէ մանուկ աղջիկներ հետերնին որբանոց բերած են իրենց օրորոցի եղբայրներն ու քոյրերը և զանոնք մեծ խնամքով կը մեծցնեն:

« Որբանոցին տղաքները շատ անգամներ թողնուածին խնդրեցին բան չուտելու, սովեալները կերակրելու համար: Ու եղաւ ալ որ իրենց բրինձ ու հացը օրը մէկ անգամ միայն կերան, մնացեալը թողլով աւելի թշուառներու:

Տօգդ. Ռէթանուս կը գրէ Վանէն:

« Իմանալով թէ գիւղի մը մէջ Հայեր կը մեռնէին սովամահ, և միջոց ալ չ'կար անոնց օգնելու, իմ 300 որբերս համախմբեցի և իրենց

հարցուցի թէ կ'ուզէի՞ն օր մ'անօթի մնալ, որպէս զի իրենց սնունդը կարենային զրկել այն խեղճ գիւղացիներուն: Իսկոյն 300 փոքրիկ ձեռքեր բարձրացան միանգամայն ի նշան հաւանութեան:

« Դուք ինձի կը հարցնէք թէ թուրք կառավարութիւնը ցորեն բաշխել տուած է հայկական նահանգներուն, ինչպէս որ խոտացած էր: Դժբաղդաբար պիտի պատասխանեմ թէ՛ կառավարութիւնը ո՛չ միայն օգնութիւն չէ՛ զրկած, այլ և այս 3 տարիներու յետեւալ հարկերուն անթերի վճարումը կը պահանջէ:

Ահա՛ սրտազրու յաճախորդը, որուն համար ես այսօր խօսք առի:

Գրիստոնեայ Եւրոպան, Ֆրանսան գլուխ ունենալով, պէտք է որ կերակրէ ու հագուցնէ որդիներն ու աղջիկներն Արեւելեան քրիստոնէից որոնց չ'օգնեց ինք ու թողուց որ շարունակ յամօթ իրեն: Քառասուն տարի առաջ, հարստահարեալ Մարօնները, ինչպէս այսօրուան Հայերը, դարձուցին իրենց նայուածքը դէպ ի խնամակալ ազգը: Լիբանանցի ծերունի մը, տիրրի հեծեալ լազորքէն իր դրան առջև մտնելու ու իբր մեռել թողուած, վեր ելաւ կանգնեցաւ, կանչել սուտ իր մտաղաչ որդին և երբ տղան իրեն մտեցաւ, բռնեց ձեռքէն ու ըսաւ անոր.

« Ետե՛ք՛ք, կուզեմ որ ինձի մեծ երգում մ'ընես: Երբ Ֆրանսացի քրիստոնեաները գան օգնութեան իրենց Լիբանանցի եղբայրներուն.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՁԿՆՈՐԱԸ

— Կարծեմ անձրեւը դադրեցաւ, ըսաւ Գաբիթ եւ ոտք ելլելով դէպ ի ապակեզուռը գնաց:

— Հա՛, ի՞նչ կը մտածես, հարցուց Սերոբ Գառնիկին: Այս վերջինը պատասխանելու կը պատրաստուէր երբ Գաբիթ գոչեց.

— Հա՛, Գառնիկ, Սերոբ, հոս եկէք:

— Ի՞նչ կայ հարցուց Սերոբ:

— Գառնիկին ոտականները եկեր են: Բարձրաձայն քրքիլ մ'է բրդաւ յաճախորդներուն մէջ:

Գառնիկ յանկարծ տեղէն ցատկեց և գէպ ի գուռ վազեց, ժպտուն և գո՛հ գէմքով:

Մանիի գինեատու-սրճարանի յաճախորդները ոտական անունը կուտային ներսէսին և Սաճակին, սա պատճառաւ որ երբեմն, խիստ ստիպողական պարագաներու մէջ կուգային իրենց հայրը կանչելու:

Ձկնորսը կը պատրաստուէր զաւակները թեւերուն մէջ անկողով նոցա ցուրտէն կապուտցած այտերն ու ձեռքերը և գողահար մարմնը տաքցնելու, երբ ներսէն սա հեզնալի խօսքերը լսելի եղան:

- Հա՛ Գառնիկ, բռնուեցար:
- Օձիքը ձեռք տուիր:
- Փախելու ճար չկայ:
- Գառնիկ, պէտք է գառնուկի պէս առջեւնին ինչալ և խեղճ խեղճ սուս երթալ:
- Տիկինդ աւելի կոթ մը քաշած քեզի կ'ուպասէ:
- Գառնիկ, խեղճ սնիծուած է:
- Գառնիկ բանդ բուսաւ:
- Գառնիկ, դուն կնիկիդ կնիկն ես:
- Գառնիկ, մէկ մ'ալ մարդոց վրայ մի՛ խրոխտար, եւայլն եւայլն:

Այսպիսի իմաստայի կատակաբանութեան առջեւ ո՛չ միայն մարդ մը որ իր բանականութեան կէսէն աւելին օղի սրուակներուն մէջ ձգած է, այլ նաև աւելի լուրջ բայց ո՛չ աւելի խոհեմ անձ մը իր անձնասիրութեան տրուած հարուածներէն կատղած, զժուարաւ կը դիմադրէ այրութեան գործ մ'ընելու զրգումին:

Գառնիկ եւս այդ զգայումէ մտրակուելով մէկ ոտուտով ինքզինքը փողոցը դառնակներուն քով գտաւ: Ինչ՞ մտնուկները, կարծես շանթահար սեղաններն մնացին: Հայրը ներսէսին երկու մանուկուկ ձեռքերը իր լայն և ջղուտ ձեռքին մէջ առած անոր երեսը կ'ապտակէր անխնայ:

— Հա՛ չո՛ւն, կը դռնէր որոտալիք ձայնով մը, ետեւէս կուգաք հա՛, հա՛ ձեր երկուքն ալ ձեզ խրկողն ալ պիտի սատկեցնեմ. միթէ ևս մարդ չ'եմ, հա՛, սա թզուկ հասակովնիդ զիս ձեր իշխանութեան տակ տանել կուզէք հա՛. ա՛ռ նայիմ, ա՛ռ մէջ մ'ալ, ա՛ռ սա ալ:

— Հայրիկ. ոտքդ պագնեմ, հայրիկ, կը պաղատէր մանուկը, ապտակներու կարկուտին տակ:

— Հայրիկ հա՛, ա՛ռ քեզի հայրիկ, ա՛ռ քեզի մայրիկ:

— Օգնութիւն մայրիկ, մտաւ, գոչեց տղեկը նուազեալ ձայնով և գետին ինկաւ:

Սոն տհաճ տեսարանին անտարբեր աչքով կը նայէին Եանիի յաճախորդները որոնք հիմայ դրան առջև խոնած էին: Լաւ գաս մ'էր որ կը տրուէր հայրական ուրախութիւնը խանգարող չարածիններուն Ու՛ր էր թէ ներկաներուն զաւակները հոն գտնուէին օգտուելու համար այդ ազգու խրատէն. պէթ այսպէս կը խորհէր մեծամասնութիւնը:

Անձ մը միայն կարող էր իր ազգեցութեան շնորհիւ՝ մէկ խօսքով հանգարտեցնել այն կատաղին. բայց նա իր ընկերային պարտականութիւնը արդէն կատարած կը համարէր սրուակ մ'օղի հրամայելով երեք ձկնորսներուն: Այդ անձն էր Հաճի Աղան:

Բայց երբ տեսան ներսէսին գլտորիլը, հասկցան որ գործը կը վաթաթարանար: Եթէ աղէտք մը պատահէր, ինչ որ խիստ հաւանական էր տաքցած գլտու մը գազանային բարկութեան մէջ, հետեւեալ օր ոտականատուն երթալու էր, իրբեւ վկայ, ժամերով գործէն արգիւտելու էր և ամենէն կսկծալին սա էր՝ որ ամենօրեայ ուրախութիւնէն զրկուելու էր, գէթ առ ժամապէս:

Այս ևս ասոր նման մարդասիրական խորհրդածութիւնք մըք մինչեւ անձնութիւն կը տանին զմարդ պնջան մեծ ներգործութիւն ըրին հանդիսականաց վրայ:

պիտի վազեն գերեզմանատունը, ծունկի պիտի գաս գերեզմանի վրայ և պիտի մրմնջես ականջիս բարի լուրը, որպէս զի ես ալ, հոգին տակ, Լիբանանու ցնծութենէն խայտամ:

Այսպէս խօսելէ ետք, մեռաւ: Աւ շուտով Եռուէֆի Գարամ կըրցաւ երթալ ըսել գերեզմանը պատկած իր հօր:

« Հա՛յր, ննջէ՛ խաղաղիկ. հա՛յր, ննջէ՛ ուրախ գուարթ: Յոյսդ՝ ունայն չէր: Պրանասցիներն եկան, և մեր ժողովուրդը մխիթարուեցաւ: »

Այդ ժամանակէ ի վեր, Տորոսի սարերէն մինչև Արարատի սարահարթները, երեք հարիւր հազար զոհեր ինկան, ու անոնց զայրացած ոգիները կ'աղաղակեն:

« Չ'եկաք դուք: Մեռանք մենք ու մեր զաւակներն ալ կը մեռնին ահա՛: Որպէս զի հանգիստ քնանանք, հա՛ց տուէք մեր որբ զաւակներուն: »

ԱՆԱՏՈՒ ՅՐԱՆԱ

Ա.Չ.Գ.Ա.Յ.Ի.Ն ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՆՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Օրմանեան Պատրիարքը որ Սուլթանին կողմէն տրուած կարգ մը վճարական խոստումներէն յետոյ հրաժարականը ետ առած էր, հիմակ նորէն պարտաւորուեալ է պաշտօնը չ'շարունակել, վասնզի իրեն հաղորդուեալ է թէ տրուած խոստումները ամբողջապէս չ'պիտի գործադրուին:

Այս խեղդատակութեանց վրայ երկարօրէն չենք ծանրանար: Պատրիարքը արդէն ազգին իրաւունքներուն համաձայն պահանջներ չէր ըրած. մասնակի ինքիներու համար գիւմուս ըրած էր միայն, ու անոնց իսկ գոհացում չ'տրուիր:

Խեղդատակութիւնը կը շարունակուի, ինչպէս չորս տարիէ ի վեր: Պատրիարքը որ մը հրաժարելով, որ մը աթոռը վերագրուելով, դարձեալ հրաժարելով ու դարձեալ հրաժարականը ետ առնելով ազգը խաղցնելու գաղտնիքը սքանչելապէս գտած է: Սուլթանը շատ գոհ է այս զաւեշտական ներկայացումներէն. թիւրք իշխանութեան պէտք եղածը այն է որ Հայոց պահանջներուն ո'ւէ գոհացում տալու հարկին մէջ չ'գտնուի: Թափուր կը մնան առաջնորդարանները, իր գահակալը չունի կիլիկիոյ Աթոռը, հայ ժողովուրդը կ'իսլամանայ Հայաստան, հարաւորահարութիւնները անօրինակ սաստկու-

թեամբ կը ճնշեն հայ ազգը և պաշտօնական բողոքի մը ձայնը չ'տուիր. ա'լ ի'նչ փոյթ Սուլթանին թէ Հայոց Պատրիարքը հրաժարականի կտակագրութիւնը կը ձեռնդնէ: Տատեան Արթին փաշա և իր պաշտօնակիցները սքանչելապէս կը կատարեն իրենց յանձնուած գերը: »

Հարկ է սակայն որ Պատրիարք ու փաշա, պէյ, էֆէնտի ժողովականներն իրենց վերջնական հնարքներն ի գործ դնեն, ինքնարդարացման վերջին խօսքերնին ըսեն, ու ազգն այլևս և ոչ իսկ թեթեւ խճբճանք մը կարենայ ընել յեղափոխական հաշուեպահանջութեան դէմ:

Քիչ մը ևս համբերութիւն թերեւս անօրուտ չ'ըլլայ: ՄԱՐՏ

« Թան » ի մէջ կը կարգանք հետեւեալը.

— Անանուն ընթերցող մը, որ Մ. Անադօլ Պրանսի բանախօսութիւնը կարգացած է ո'չ առանց խորին յուզումի, 500 ֆրանքի գումար մը զրկած է ի նպատակ հայ որբերուն:

« Փարի Նուվէլ » էն կը քաղենք հետեւեալը.

Շաբաթ՝ Յունիս 16ին տեղի ունեցաւ Բարեկի Վառլիլ թատրոնին մէջ՝ մեծ ցերեկոյթ մը ի նպատակ հայ որբերուն, որ կազմակերպուած էր « Մարդու իրաւանց Միութեան » ընդհանուր նախագահութեան տակ և Ա. Չօպանանի ղրղմամբ:

Հուշակատր Անաթօլ Պրանսը զգայուն շեշտերով և ճարտար լեզուով մը խօսեցաւ հայ որբերու դրութեան վրայ և ամենուն զթութիւնը շարժեց:

Պրանսացի մեծ մատենագրին բանախօսութեան անմիջապէս յետոյ, Քրանսացի յայտնի արդիտներ՝ որք բարեգործական ձեռնարկներու մէջ միշտ պատրաստ են իրենց օգնութիւնը տալու, հանդիսատեսները զմայլեցուցին իրենց հրաշալի տաղանդով: Յիշենք ի միջի այլոց՝ Տիկին Սելիոն-Վէյպէ, Պ. Մունէ Սիւլլի, Անթուան, Արպէն Լամպէ, Գօզլէն Լէն, յիշենք նաև Պրանսայի թատրոնական ամենամեծ փառքերէն մին՝ Տիկին Ռէֆան: Հանդէսը կատարելապէս յաջողանցաւ, ներկայացման նիւթերը շատ լաւ ընտրուած էին. հանդէսը վերջացաւ Ա. Չօպանանի համառօտ բանախօսութեամբ:

ԼԵՒՈՆ ՆԱՅԻԼԵԱՆ

Մեր թերթերէն և ոչ մէկը — որչափ որ կը յիշենք — աւետեց մեր հայրենակիցներէն Լիւոն նաֆիլեանի, որդի յայտնի բժշկագետ նաֆիլեան

- Տղան ո'ւր է, հարցուց խիստ ձայնով մը:
- Պօղիկ զուրբ բացաւ և փողոցը զննեց. տղան աներևութացած էր:
- Տուն գացած ըլլալու է, պատասխանեց:
- Հապա պզտիկը, ըսաւ Գառնիկ ինքն իրեն խօսելու պէս:
- Անշուշտ ան ալ եղբորը ընկերացած է, պատասխանեցին մի քանի անձինք:
- Գառնիկ քանի մը քայլ առաւ, իբր թէ զուրս կըլի ուզէր:
- Ո'ւր կ'երթաս, պօռաց Սիբոր:
- Տղաք... ըսաւ Գառնիկ:
- Տղաքը ուր որ են, հոն են. եկուր քստէ՛, սա շիւր լինցնենք, մէկտեղ կ'երթանք:
- Գառնիկ հնազանդեցաւ, մտախոյ, դէմքին վրայ արգահատութեան, գթոյ և զղջումի նետք մը կը նըշմարուէր, խեղճ իր իրաւանց վերստին կը տիրանար:
- Հայրը՝ ոչ այնքան գինով, վասնզի քաջ խման մ'էր, կ'սկսէր խորհիլ թէ այն օրին, այն անձերին տակ պզտիկները հարկաւ կարեւոր բանի մը համար եկած էին: Մայրը գիտնալով իր Գառնիկին՝ բարկացաւ և ըմբոստ բնաւորութիւնը, իր բարկութեան առանց պատճառի չէր ենթարկած զանոնք: Անտարակոյս քիչ մը կար. բայց ի'նչ:
- Գառնիկ անուշութեամբ այս կէտը հարցնելու և հասկնալու պիտի պիտի թարար յարձակած էր իր անմեղ մանկան վրայ, որ յօփար կ'սկսէր եկած չէր հոն:

Փաշայի — Բարեկի մէջ ունեցած յաջողութիւնները: Այս երկուստարգը որ ճարտարապետութեան ուսանող է գեղարուեստից վարժարանը մտնելու համար մրցումի (concours) մը ներկայանալով (Շափթալ Գօլէֆին մէջ պատրաստուելէն յետոյ) բոլոր Քրանսացի և օտար ընկերներուն մէջ վեցերորդ տեղն ընեց, իսկ օտարներուն կարգին մէջ բոլորովին առաջին տեղը Լիւոն նաֆիլեան գեղարուեստի շատ փոքր է՝ պատանի մը, բայց մեծ ապագայ մը կը խոստանայ. իւր մասնագիտութեան տեսակէտով մեծամեծ յոյսեր կարելի է ունենալ այդ հայ գեղարուեստագէտէն:

Ամսոյս 24ին կիրակի կէս օրէն ետքը ամենաշքեղ կերպով տեղի ունեցաւ թաղման հանդէսը, Խառն գառարանի վերաքննիչ Ատենի նախկին խորհրդական հոգեւոյս Խաչատուր Պէյ Միքայէլեանի Այրի, և քաղաքիս գերմանական հիւպատոսարանի թարգման Տիար Գարբիէլ Միշէլի Մայր:

ՏԻԿԻՆ ՎԱՌՎԱՌԻ

որ 75 տարեկան էր. Դագաղին առջևէն սգակեր կ'երթային Գերմանական հիւպատոսը Մ. Անգօն և հիւպատոսարանի պաշտօնական մարմինը:

ՆՈՐ ՕՐ կ'արտայայտէ իր խորին վշտակցութիւնները հանգուցեցելոյ որդի Տիար Դագաղիէլ Միշէլի, Բէիզեան և Միքայէլեան գերդաստանաց, նաև բոլոր պարագայից:

Ա Չ Դ

Արաբկիրի որբերու Հոգատար ընկերութեան Հիմնագիր ժողովոյ Դիւանը կը ծանուցանէ թէ՛ անցեալ կիրակի օրուան նիստը տեղի չունեցաւ՝ յուղարկաւորութեան մը պատճառներով:

Յիշեալ նիստը միևնոյն օրակարգով տեղի պիտի ունենայ այս կիրակի 1 Յուլիս (Ն. Տ.) կէս օրէն յետոյ ժամը 4ին Ազգային Մանկապարտիզին մէջ:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՓԱՐԻՉ 25 Յունիս. — Լիւ-Հունկ-Չանկ չինական զեպաններէն ինդրած է Տէրութեանց առաջարկել իր միջամտութիւնը կռիւր զարեցնելու համար:

ՇԱՇԿ-ՀԱՅ 25 Յունիս. — Եռ-Ֆ-Լու, ինստակալ

Ա'հ, եթէ այդ օրին չըլլար, մանաւանդ այդ դաւաթի ընկերները վրան չ'ննդային, եղելութիւնը շատոնց պիտի գիտնար: Մինչդեռ հիմայ ամեն բանի անտեղեկ էր և ի լրումն չարեաց՝ աղիկներն ալ անհետացած էին:

Արդեօք ո'ւր գացած էին: Ներսէս ի'նչպէս կատրութիւն ունեցած էր քաղելու, հարուածներու այն տարափէն կտքը. վասնզի կը յիշէր որ բաղմամբիւ եւ ուժգին ապտակներ իջուցած էր այն փափուկ և թարմ այտերուն վրայ, որոնց քով լեզուն իսկ խարտոց մ'է, ձեռքն ալ այնքան ծար էր որ...:

Հապա փոքրիկ Սահակը, զոր նշմարած էր միայն, ո'ւր գացած էր. շատ փոքր էր տան ճամբան մինակ գտնելու համար, ան ալ գիշերով, Արդեօք ներսէսին հետ էր. ո'վ գիտէ: Միթէ ներսէս խորհած էր զայն փնտռել:

Քանի որ ինք, հայր մը, այնքան չարաչար կը գործածէր իր նուիրական պարտականութիւնը, ներսէս իր մանկական հասակով ի'նչ պարտք ունէր իր եղբոր վրայ խորհելու, իրեն ո'վ տուած էր այդ օրինակը, և միթէ չարտեղու եւ զայն փնտռելու վիճակի մէջ էր:

Հիմայ ինք զարձեալ բարեկամներուն հետ կը զըւարճանար, տաքուկ տեղ մը նստած, մինչդեռ զուրը ցրտաշունչ հով մը, որ ամենէն լաւ հագուուղներն անգամ կը սարսեցնէր, միթէ չ'պիտի ստուգնէր ցնցոտիներով հազու պատասպարուած իր անտիական եւ տկար զաւակները...:

որ այն միջոցին յորում այրութիւնը ապացուցանող հայրը անազնիս ոտքը վերցնելով իր առջեւ տարածուած որդւոյն գլուխը շախշախելու կը պատրաստուէր երկու անձինք զիւցազնաբար յառաջ նետուեցան և այդ կատաղին քաշկռտելով սրճարանին մէջ տարին:

Անպաշտպան մանկիկ մը ցմահ գանակոծելու եւ անասնացած մարդ մը զուգելու համար տեղի ունեցող այս անուր քաջագործութեանց միջոցին Նանի բացակայ էր և Պօղիկ անուշ քուն մը կը քաշէր աթոռի մը վրայ:

Երբ ամեն ինչ լրացաւ և զուրը վոցուեցաւ, Սեբոր որոտընդոտ ձայնով մը օղի ապապրեց:

Պօղիկ տեղէն ցատկեց և զէպ ի հաշուեսեղան վազեց:

Երեք բարեկամները գաւաթները լեցուցին և Դաւիթ լպիւրը երգ մը սկսաւ:

Սառնաշունչ հովը կը շարունակէր իր անարկու սուլումները:

Գ.

Սակայն Գառնիկ գաւաթները կը պարպէր իջարու վրայ:

Տաս պարկեան ետքը աչքերը կարմրած, դէմքը դաժան էր: Պահ մը գլուխը ձեռքերուն մէջ առաւ և արտօսք մը սրբեց գաղտնաբար:

Թանկարժ օտք ելաւ և զէպ ի դուռ ուղղուեցաւ:

ԿՈՒՉԷՓ ՈՒՆԵՆԱԼ ՈՍԿԻ

ԿՈՒՉԷՆ ԼԱՐԻՈՂ, ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ

ԺՍՄԱՅՈՅՑ ՄԸ

ՄԻՄԻԱՅՆ 120 ՂՐԾ. ՎՃԱՐԵԼՈՎ

ԳԻՄԵՑԷՓ

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաև ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներու ամենազերամատչելի գներէն սկսելով մինչև ազամանդազարդ: Արծաթ ժամացոյցներ 50 դրուէն սկսելով նիքէլ որմոնթուա ժամացոյցներ 22 դրուէն սկսելով. նաև Ոսկի, արծաթ եւ ոսկեպատ շրջթաներ եւ գոհարեղէններ, ինչպէս նաև պատի եւ թօնաօրի բազմազան բանտիրներ:

Ամերիկեան նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 Ղրուշի անհատապի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ըստին:

Ուրեմն զիմեցէ՛ք ուղղակի:

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Կրածէ կը ծանուցանեն թէ Ն. Վ. Ղազի Մուխթար բաշան մեկնած է այդ քաղքէն երթալու համար, Աւստրիոյ Օսի քաղաքը ուր պիտի մնայ մինչև ամսոյս վերջը:

— Գոյըս բաշա և Եագուպ բաշա Արթին կիրակի իրիկունը Ռէմէյէն վերադարձան Գահրէ:

— Գասն աստուածաբաններէ բազկայեալ ուսուցիչական առաքելութիւն մը հասած է Կ. Պոլիս, ուսկից պիտի երթայ Երուսաղէմ, այցելելու համար Ս. Գերեզմանն ու Պաղեստինու եկեղեցիները: Մուսկուայի համալսարանին սնօրէն Արսէնիս եպիսկոպոսը կ'առաջնորդէ այս առաքելութեան, որ կը բազկանայ միեւնոյն համալսարանի երկու ուսուցիչներէն, (որոնցմէ է Քէփիթէրի գիտունը, հեղինակ ուսուցիչը) Արեւելեան եկեղեցիներուն հետ ունեցած յարաբերութեանց և Տօսիթէ Պատրիարքին վրայ գրուած երկասիրութեանց) զանազան ծխական վարժարաններու ուսուցիչներէ, ինչպէս նաև հա-

մալարանին եօթն ուսանողներէն, որոց մէկն Յոյն է և միւսն Արաբ:

ԺԱՆՏԱԽՏԷ. — Առողջ յայտահական վարչութեան կողմէն երէկ կէս օրին հրատարակուած ժամտարարի պաշտօնական վիճակացոյցը. Բօր-Սայիտի մէջ կան 22 (4 եւրոպացի 18 տեղացի). նոր մուտքեր, 2, (1 եւրոպացի և 1 տեղացի). հիւանդանոցի մէջ մեռած, 1 եւրոպացի. հիւանդանոցէն դուրս, 0. բժշկուածներ 3 տեղացի. մնացածներ, 20, (4 եւրոպացի և 16 տեղացի):

Եգիպտոսի մէջ 27 Ապրիլէ մինչև երէկ 88 հոգի բռնուած են ժամտարարէ, որոնց 37ը մեռած, 31ը բժշկուած: Յունիս ամսոյ մէջ հիւանդութիւնը վայրէջ ընթացք մ'ունեցած է:

«Էճիբըն Կաղէթ» կը հրատարակէ հետեւեալը. «Նոր պատահարները՝ ուրեք նշանակուած են Եգիպտոսի մէջ, և կ'երևի թէ առողջապահական իշխանութեանց հզօր ջանքերը զորս գրած է վարակումը Բօր-Սայիտի մէջ սահմանափակելու համար, անյուստի յաջողութեամբ պատկուած են, հակառակ անյաղթելի դժուարութեանց»:

ԽՏԻՎԸ. — Ահմէտ Պէյ Շէֆիգ, Յունիս 25ին առաւօտեան ժամը 10 ու կէսին Բօրվիդթորիս-յէ կը հեռագրէ Ն. Վ. Խտիվական Փոխանորդին.

«Նորին Բարձրութիւնը 10 ժամ անընդհատ քնայալ. ջերմ ա՛լ չունի, ախտանշիշերը բարւոքած, ախորժակը լաւ, ընդհանուր վիճակը գոհացուցիչ: Նորին Բարձրութիւնն օրուան մեծ մասը կ'անցընէ անկողնէն դուրս»:

Հետեւեալ հեռագիրն ալ Յունիս 25ի կէս օրէն ետքը ժամը 5ին քառօրդ մնացած քաշուած է, Շէֆիգ պէյէն առ փոխանորդն.

«Փրօֆէսէօր Սիմօն կը յայտարարէ յետ քննութեան թէ Նորին Բարձրութիւնը լիովին ապաքինած է և ա՛լ պէտք չկայ վիճակացոյցի: Մեր Վեհ. Տէրը պիտի երթայ կէսօրէ ետքը բնակիլ ի Պրօքինկէմ Բալէյս»:

Ն. Վ. Փոխանորդը Խտիվին հրամանով իր շնորհակալութիւնները կը կրկնէ ամեն անոնց որոնք Ն. Բարձրութեան հեռագիրներ ուղղած են առողջութեանը տեղեկանալու համար:

ՆՆԱՐԱՐՆԵՐԸ. — Նն. Վ.Վ. Նախարարները յառաջիկայ շաբաթուանէ սկսեալ պիտի հաստատուին Ալեքսանդրիա:

ՍՈՒԼԹԱՆԸ. — Այս երկուշաբթի Կ. Պոլսէն հասած հեռագրէ մը կ'իմանանք թէ՛ Սուլթանը 50000 ոսկի ստորագրած է Գամաուկոս-Մէքքէի երկաթուղիի շինութեան ծախսոյ ի նպաստ:

Կայսրուհին կը քորորդին, չինական բանակին սպարապետութիւնն ստանձնած է: Չի առաւելան գէմ Թիէն-Չիին օտար հաստատութեանց վրայ յարձակած է 45 թնդանօթներով: Փէրինի զեպանատունը՝ կը մնան միշտ պաշարուած չինական գնդերէն, որոնք կը յուսան սովի բռնելով զանոնք զբաւել:

ՀՕՆԿ-ՔՕՆԿ 22 Յունիս. — Լի-Հուի-Չիանի, սեւակցութեան մը մէջ յայտարարած է թէ՛ ինք կայսրուհին մայրաքաղաքը կանչուած է վերջ մը գնելու համար Պօքսընըրու ապստամբութեան և Տէրութեանց հետ հաշտութիւն ընելու: Շանկ-Հայէ պիտի մեկնի ամսոյ 27ին:

ԼՈՆՏՐԱ 23 Յունիս. — Թուան իշխանն առած է չինական բանակին սպարապետութիւնը, ոչ թէ Եոսֆ-Լու:

ՓԱՐԻՉ 24 Յունիս. — Ն. Բ. Ստիվը հանդարտ գիշեր մ'անցուց:

ԲՐԷԹՈՐԻՍ 19 Յունիս. — Պուլլըր, Պրապանդ ու Ռենալ զօրավարներուն գզները հետգհեռէ կը սեղմին Տը Վէզ զօրավարի բանակին բոլորովը. կ'ըսուի թէ Պօթա զօրավար տրամադրի է եղբր անձնատուր ըլլալու, բայց կ'արդիւրի եղբր նախագահ Բրուկէրէ որ կը պնդէ որպէսզի իրեն թոյլ տրուի երկրին մէջ մնալու:

ՇԷՅՈՒ 23 Յունիս. — Գաշնակից ծովակալները կ'ընթանան կատարեալ համաձայնութեամբ: Թիէն-Չիին եւրոպական հաստատութիւնները գրեթէ քանդուած են ամբողջովին: Մեր գնդերը կատարաբար կը կոտին:

Ռուսիայի գործակալութիւնը Շանկհայէ կ'իմանայ թէ՛ կայսրուհին պաշտօնական հրահանգներ հրատարակած է բոլոր օտարականներուն ընաջնջումին համար: Քէմիթի ծովակալը կը հեռագրէ թէ՛ գնդերէն 2000 հոգի կը մեկնին այսօր Թիէն-Չիին օգնութեան:

Ամերիկեան «Պրօքլին» ու «Մօնէտոք» մարտահաւերը թաքու մեկնելու հրամանն ստացան:

Պուլլըր զօրավար, Սթէնտերըքնէ կը հեռագրէ թէ՛ կայսերական «Եօնիսիէն» 400 եւ «Հայկապոն»ներէն 180 հոգի, որոնք «Լինտի»ի եւ «Հէյպրըն»ի մէջ գերի բռնուած էին, հոտ հասան 18ին: Մեծ մասամբ քաշուող ըն:

ՍԹԷՆՏԷՐՏԸՆ 24 Յունիս. — Պուրիքները կը շարունակեն յանձնելու իրենց զէնքերը: 15—20000 ի կը հասնի թիւը ուժերուն, որոնք աակալին կը գտնուին Նախագահ Բրուկէրի տրամադրութեան ներքեւ:

ՇԱՆԿ-ՀԱՅ 24 Յունիս. — Հեռագիրներու անօրէնք կը յայտարարէ թէ՛ մինչև չորեքշաբթի՝ Փէրինի օտարականները ողջ և առողջ էին, թէ՛ եւ բոլոր զեպանատունը հրդեհուած, ի բայ տակալ Մեծին-Բրիտանիոյ, Աւստրիոյ և Գէլլիքի զեպանատները: Օտար զեպաններն իրենց անցարկերը խնդրեցին:

ԼՈՆՏՐԱ 25 ՅՈՒՆԻՍ. — Շէֆու ճամբով Յունիս 24 ին ծովակալ Պրուս Թաքուէն կը հեռագրէ. «Պաշարուէն ի վեր Թիէն-Չիին մէջ յուսանալի քաշութեամբ կը կոտին. ամեն կարգի ջանքերը կ'ընենք օգնութեան հասնելու համար պահակազօրքին»:

ԼՈՆՏՐԱ 26 ՅՈՒՆԻՍ. — Որոշուեցաւ Չինաստան զրկել Հնդկական երկրորդ զօրաբաժնի մը, այրուածի եւ հետեւակ: Ն. Բ. Ստիվը լիովին ապաքինած ըլլալով՝ այսօր հետեւ վիճակացոյց չը պիտի հրատարակուի:

Գառնիկ յանկարծ վեր ցատկեց եւ՝
— Ես պիտի երթամ, ըսաւ կտրուկ ձայնով մը:
Այո երեք բաւերուն մէջ այնքան կորով եւ հաստատամտութիւն կար որ ոչ ոք առարկութիւն մըրաւ:
Ձկնորսը յամբաքայլ զուրս ելաւ, եւ հազիւ քիչ մը հեռացած սկսաւ վազել:

Գ.

Գիտնայարկ, կրթափ, ձեռնարկ ցած, ամեն հովերուն ըրած ասփնջականութեան քիչ շատ առաջին առնուելու նպատակաւ անհամար ծակոտիքներուն և ձեռքերուն մէջ թուղթեր եւ քրօններու կտորուանք խցուած՝ տախտակաչէն սենեկի մը մէջ ենք:

Մխարձակ կանթեղի մը աղօտ լոյսով կը նշմարողին՝ իբր կազմած՝ չորս հատ յարգաթափ աթոռ, որոնց երկուքը կտորնաւոր, պղտիկ պղան մը որ կը ծառայէ ամեն բանի, եւ որուն վրայ գրուած են նոյն իսկ կանթեղը, կարկուտելու կարտ իսկ մը ցնցոտիներ, շարի փարջ մը: Դարակին վրայ շարուած են սա՛ն մը, երկու պնակ, տապակ մը եւ թիթեղեայ մի քանի զգալ ու պատառաքաղ:

Թշուառութեան ընտալող ներկայացնող այս սենեակը եւ բոլոր պարունակութիւնը կը փայլին սակայն մաքրութեամբ մը՝ զոր փափաքելի պիտի ըլլար անսնել նաեւ աւելի հնչուածաւ բնակարաններու մէջ:

Դռնէն ներս մտնողը նաև ոչ ոք կը տեսնէր, բայց

երբ եկողին շարժուէն յուզեալ օղը հանդարտէր, սուր ահանջի մը լսելի պիտի ըլլար տաժանլի եւ ահար չնչառութիւն մը, որմէ աչքերը առաջնորդուելով պիտի կրնային տեսնել՝ զոան ետեւի կողմը, մութ անկան մը մէջ՝ ուր կանթեղին լոյսը չ'էր հաններ ըստ բաւականի՝ բայց որովհետեւ այն մտածին էակը, զոր ուրուական կ'անուանենք, գոյութիւն չ'ունի իրապէս, եւ՝ հետեւաբար՝ չկրնար իր ներկայութիւնը յայտնել որ եւ է կերպով, այցելուն պիտի հասկնար երկնցած ամենախեղճ խշտակի մը վրայ որ իր առջեւ գտնուող իրական էակ մ'էր, որ ուրուականէ կը տարբերէր հեղձամղձուկ չնչառութեամբն ու մերթ ընդ մերթ թեւերուն ջղաձգական շարժումովը:

Արգարեւ կին մ'էր այն որ գրեթէ կը հոգեվարէր յետին չբաւորութեան ճանկերուն տակ:

Եւ սակայն զեւ մանկամարդ էր նա եւ լաւագոյն օրեր տեսած:

Այդ թշուառաչէն, այն սինեկին տիրա չին. ձկնորս Գառնիկի կողակիցը Մարիամն էր:

Ձկնորսի մ'աղջիկ էր՝ մօրմէն որս:

Եթէր տարի առաջ՝ կրք, տակուին քսան տարեկան էր եւ բաւական զեղեցիկ՝ ճանչցած էր Գառնիկը, որուն միայն մայրը ող՝ էր: Երկու երիտասարդները իրարու սիրահարեցան եւ որովհետեւ միոյն հայրը եւ միւսին մայրը իրենց զաւակաց իղձը չ'կատարելու պատճառ մը չ'ունէին, ամուսնացան անյարգաղ: Ամիս մը ետքը Գառնիկին մայրը ցորտ օղով առտուն կանուխ գոյս ելած եւ սաստիկ պաղ աննելով քանի մ'օր յետոյ մեռած էր:

Մի քանի օր ետքը Մարիամին հայրն ալ պիշեր մը ձկնորսութեան պնաց եւ ալ չ'վերադարձաւ:

Հարս ու փեսայ տիրեցան, լազին, ողբալին, որովհետեւ մարդս մեռեալներուն վրայ լայն ու ողբալին աւելի մեծ պարտականութիւններ ունի, եւ մանաւանդ թէ ամեն կորուստ եթէ բոլորովին չ'մոռցուիր՝ պէթ իր անագնութիւնը կը կորսնցնէ տակաւ. Գառնիկ եւ Մարիամ միացուցին իրենց ծնողներէն մնացած զոյգին ինչ գոյքը, եւ կինը՝ տան մէջ կար կարելով, եւ այլը՝ առանց ծուլութեան իր արհեստը շարունակելով բաւական զիւրի կեանք մ'ունեցան:

Գառնիկ ոչ միայն ծոյլ էր այլ նաև հեռու էր ուն ամեն մօլութիւններէ, որոնք կարծես թէ իր արհեստակիցներուն մեծամասնութեան վրայ անձնաւորեալ են՝ զժբաղաբարս:

Պատկութեան ժամանակ քանանայէ մը լսած ըլլալով որ ձկնորսը՝ իր արհեստին թեմամբ՝ օգին ամեն քրճածոյքներուն եւ ծովին բոլոր խորագալութեանց ենթակայ ըլլալուն պատճառաւ պարտի միշտ ուշիմ, զգուշաւոր եւ խոհական ըլլալ, եւ ասոր համար ալ պէտք է հեռու կենալ գէթ չարիքանց գործածութիւնէ ոգիկից ըմպելիներու, որոնք ոչ միայն ուղեղը կը խանդարեն, այլ նաեւ՝ անցողական եւ խառնակ կորովի երեւոյթի մը ետքը՝ վերջ ի վերջոյ կը թալլցնեն եւ ապիկարութեան կը զատապարտեն այն ջղերը, որքան այնքան պիտանի են փոթորիկ ատեն նաւակները կառավարելու համար, Գառնիկ խիստ քիչ անցած կը տեսնուէր գինետուններու մէջ: Սովորաբար իր ձուկիսը ծախածին պէս տուն կը վազէր եւ իր սիրելի Մարիամը անհեռով կ'ելլէր պոռոյս մ'ընելու քաղաքէն դուրս, պոռոյս որ ամենաաղքատ կազմութիւն մը կ'ըլլար ինչ իրեն եւ թէ կ'ընէր կարգն, յոգնած աչքերուն համար:

(Շարունակելի)

ՓՈՒՍՈՒՄԻՒՆԻՆ. — Վեց մեծ տէրութիւններն սկզբունքով ընդունած են 2,600,000 եգ. ոսկիի փոխառութիւնն իբրև մենաշորհեալ պարտք եգիպտական երկաթուղիներու համար:

Տէրութեանց հաւանութիւնը պիտի զեկուցուի Արտաքին գործերու նախարարութեան, յառաջիկայ ամսուն:

ՏԱՐՖՈՒՐ. — Տեղական լրագրի մը Սուտանէն առած տեղեկութեանց համեմատ, Տարֆուրի սուլթանը՝ Ալի Տիւնար, 4 ամիս առաջ իր վեզիրը Ահմէտ Վալատ Ծատը զրկած է Օմտուրման, յայտնելու համար իր հնազանդութիւնը Սուտանի Ընդհ. կառավարչին և բանակցութեան մտնելու Տարֆուրի կացութեան մասին:

Ահմէտ Վալատ Ծատը վերադարձած է Տարֆուր, հետը տանելով շատ մ'ընծաներ, սակեղօծ սարքեր, և ըն:

ԳՈՂՈՒԹԻՒՆ. — Պապէլ Շարիյէ բնակող երկու տեղացի տիկիները քանի մ'օր առաջ պտոյտի կ'ենեն. իրենց վերադարձին, տանը դուռը աւրուած կը գտնեն. 360 ոսկիի արծու շուքեամբ դրամ ու գահարեղէններ գողցուած էին: Ոստիկանութիւնը խուզարկութեան սկսած է հիմայ:

ԿԱՌՎՔՆԱՏ. — Սուտանի մէջ կախեցին կին մը և իր տարփածուն, որոնք նեղիչ էրիկը թունամահ ըրած էին: Այս առաջին անգամն է որ կին մը կախազան կը հանուի այդ նահանգներուն մէջ:

ՓԱՌՈՒՍ. — Զրոյց կը պտտէր թէ՛ եղբայրասպան ժան Տիմոսանտոս՝ նաւարանի բանտէն փախած է ուիչ 10 բանտարկեալներու հետ: Բայց վերջէն քաղուած տեղեկութիւնները հաւատք ընծայել չեն սար այս զրոյցքին:

ԶԻՆԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՃԱՐՆԵՐԸ

« Լը ժուռնալ » թերթին քաղաքական բաժնին խմբագիր Մ. Ա. Սէսսիի յօդուածին թարգմանութիւնն ի ստորև կը հրատարակենք:

ԾԱՆՐ ԴՐՈՒԹԻՒՆ

« Այս օրէ ի վեր՝ դրութիւնը Զինաստանի մէջ՝ արտաքոյ կարգի ծանր կերպարանք մը առաւ: Կը կարծուէր թէ այն 2300 զօրքերն որ ծովակալ Սէյմուրի հրամանատարութեան տակ միկնեցան Թիէն-Չիւնէն, որքաթ կամ առ առաւել շաբաթ օր Լանկ-Պանկ հասնելով պիտի կարենան անմիջապէս վանել չինական մայրաքաղաքին ապստամբները: Կ'ըսէին թէ չինացի կանտոնաւոր զօրքեր պատրաստ կ'ընէին եւրոպացւոց մայրաքաղաք մտնելը արգելելու և թէ այն թաղերը ուր եւրոպական դեսպանատները կը գտնուին, չրջապատուած էին կամ պաշարուած այնպիսի ամրոցէ մը որ ամենայն ինչ կարող էր ընել: Բայց ոմանք ալ կ'ըսէին թէ խնամակալ թագուհին, վախնալով այն վտանգներէն որք կրնային կայսերական ցեղին վրայ գալ, եւրոպական պետութեանց ներկայացուցիչներուն խաղաղութիւն էր խոստացիր: Վերջապէս՝ կը յուսադէր որ այդ ներկայացուցիչները իրարու հետ համաձայնելով պիտի կարենային պէտք եղած ապահովութիւնը եւ ապստամբութեան ճնշումը իրագործել:

Բայց գործերը այսպէս չ'աւրձան: Եթէ ծովակալ Սէյմուրը իր առջեւ չ'ընացի կանոնաւոր զօրքեր ունենար, կարող էր Փէքին հասնիլ, չինաց բանակին մեծապէս վնասելով, բայց նա կը գտնուի բոլորովին ապրտամբած երկրի մը մէջ. սոյն խումբերը որոնք իւր զօրաց խոչնդոտ կը հանդիսանան, չեն կրնար դիմանալ իրենց կրակին: Հազիւ թէ եւրոպացի զօրքերը հրացանաձողութեան կ'սկսին, չինացիք անմիջապէս կը տարաողին, բայց մի քանի ժամէն յետոյ նորէն կը հաւաքուին: Անոնք զիտնն որ կայսերական կանոնաւոր զօրքերը իրենց կտեր կը գտնուին և կը հաւատան թէ ազատութեան համար կը կուտն: Անոնք ատելով կ'ատեն « Սասանայ եւրոպացիները . . . »:

Լորտ Սէյմուրը Լանկ-Պանկի մէջ բաւական պաշար ունի, օգնութեան պէտք չունի, և վերջապէս ի՞նչ կը գտնայ Փէքինի մէջ: Ծանկ-Հայէն եկող վերջին հեռագիր մը կ'ըսէ թէ մայրաքաղաքը 100,000 չինացիներէ պահպանուած է,

թէ քաղաքին զոները գողուած են, թէ զօրավարն թունկա յայտարարած է թէ և ոչ մէկ նոր գունդ (միջազգային) « Սուրբ քաղաքը մտնելու չպիտի թողու: Գուցէ՛ մի քիչ չափազանցութիւն կայ ատոր մէջ: Բայց անաւասիկ ուրիշ հեռագիր մ'ալ որ կ'իմայնէ թէ Փէքինի բոլոր դեսպանատներն քանդուած են և թէ Գերմանիոյ դեսպանը սպաննուած է: Մենք տեղեկութիւն խնդրեցինք Արտաքին Գործոց մինիստրութենէն և Գերմանիոյ դեսպանատնէն (ի Բարիդ), բայց անոնք ալ բան մը չեն գիտիր . . . : Շաբաթ օրուան հեռագիր մը կ'աւելցնէ թէ Փէքինի արեւելեան թաղին մէջ բոլոր քրիստոնեայները ջարդուեցան, թէ կաթոլիկ մայր եկեղեցին կործանուեցաւ, երեք անգղիական և ամերիկեան եկեղեցիներ նոյնպէս կործանուած են, թէ եւրոպացւոց պատկանող բնակութիւնները այրուած են:

Ժամանակը եկած է գործելու: Մինչև ասօր ձեռք առնուած միջոցները անբաւական էին, կ'երեւայ թէ բոլոր պետութիւնները իրարմէ վախնալով, կը ջանային իրարու ջանքը ոչնչացնել, ի՞նչ ինքնասէր հայրենի որոնք ա՛յնքան կեանքի պիտի արժեն:

Երբ տուն մը կ'այրի, հող չեն ըներ իմանալու թէ ո՞ր ձեռքն է չուր քերողը կրակը մարելու համար: Խնդիր է իմանալ թէ բրիտանական զործակալ մը պիտի թոյլատրէ՞ թէ պիտի արգելէ ֆրանսական ջոկատի մը որ օգնութեան համար Սէյմուրի բանակին: Վերին աստիճանի ջանք մը հարկաւոր է Փէքինի մէջ զրտնուողներուն օգնութեան հասնելու՝ եթէ դեռ ժամանակ է, և զաս մը տալու այն մանտարիներուն որոնք այնքան զէջ խորհուրդներ տուած են խնամակալ կայսրուհւոյն, զաս մը որ երբէք չ'ուռնան անոնք:

Տեղույս Որբասիրաց Ընկերութեան Պատ. Գործ. Ժողովոյ Ատենապետ Տիար Ա. Պէրպէրեանէ վարչութիւնն զրկուած է հետեւեալն ի հրատարակութիւն:

Մեծապատիւ Տիարք, Ատենապետ եւ Անդամք Որբասիրաց Ընկերութեան ի Գահիրէ Տիարք,

Սրտագին հաճոյք կը պատճառէ մեզ, այս անդրանիկ գրութեամբ շնորհաւորել ազգօգուտ ընկերութեանդ կազմութիւնը և միանգամայն ջերմ շնորհակալութիւններ մատուցանել այն բարեխօսար ձեռնտուութեան համար, զոր այնքան ազնուօրէն հաճեցաք ընծայել մեզ, Հաստատութեանս ի նպաստ տեղույս ազգայնոց նուէրները գանձելու գործն ստանձնելով: Չեր այս աշխատութեան առաջին արդիւնքն, քսան երկու (22) անդ. ոսկի, Տեարք Տօքթ. Քէյէճեանի և Յ. Ճէպէճեանի շնորհիւ իր ժամանակին ստանալէ յետոյ՝ նախընթաց թղթաբերով եւ միեւնոյն միջոցաւ՝ ուրախութիւնն ունեցանք ստանալու նաև տասնըկէց (16) անդ. ոսկույ գումար մը, զոր Պատ. Ընկերութիւնդ Հաստատութեանս իբր բաժին յատկացուցած է՝ թատերական ներկայացման մը հասոյթէն: Չեր հոգածութեան եւ համակրութեան այս զործնական ապացոյցները, եւ ձեր տեսական աջակցութեան մասին մեր վերոյիշեալ յարգելի բարեկամներէն հազարուած յուսադրութիւնները մեծ քաջալեր կ'ընծայեն մեզ, եւ կը վստահացնեն որ Գահիրէի ազգային շրջանակին մէջ այժմ ունեցած եմք Օթմանցակ Մարմին մը՝ որու կարօտ կը մնար Հաստատութիւնս՝ իր հիմնարկութենէն ի վեր:

Կատարեալ յաջողութիւն մաղթելով ձեր բարեհալութեան նպատակին, եւ կրկնելով մեր խորին շնորհակալութիւնները՝

Մնամք յարգանքօր ի դիմաց Տնօրէն Խորհրդոյ Նախագահ ՊԵՏՐՈՍ ՎՐԴՊՏ. ՍԱՐԱՃԵԱՆ Առաջնորդ Կիպրոսի Ատենապետ ԱՐԹԻՆ ՄԷԼԻՔԵԱՆ Ատենապետ Ա. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Ա. Զ. Պ.

Նորակազմ Աղքատախնամ ընկերութեան Ընդհ. Ժողովն տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակէ 1 Յուլիս (Ն. Տ.) առաւօտեան ժամը 10ին, Ազգ. Մանկապարտիզի սրահը եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Le gérant, J. MUNIER.

ՕՐԱԿԱՐԳ

- 1. Քննութիւն և վաւերացումն հիմնական կանոնադրի:
2. Ընթերցումն և վաւերացումն ներքին կանոնադրի Գործ. Ժողովոյ:
3. Եռամսեայ հաշուեկշիռ:

Իրանու խնդրելով Պատ. ընկերներէն որ փութան իրենց ընկերական պարտականութիւնը կատարելու համար ներկայ լինել սոյն կարևոր նիստին, միանգամայն խիստ գոհ պիտի մնայ եթէ Պատ. ազգայինք առ հոստարակ հաճին ներկայ ըլլալ սոյն բարենպաստակ ընկերութեան Ժողովին:

Ի դիմաց Իրանի Ընդհ. Ժողովոյ Ատենապետ Ատենապետ Հ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Ս. ՊԻԻԼՊԻԻԼԵԱՆ Գահիրէ, 26 Յունիս 1900

Լսարան Ընթերցատան Պատ. Գործ. Ժողովոյ Իրանը կը փութայ ծանուցանել ընկերութեան արգոյ անդամներուն որ հաճին իրենց յետեւալ ամսավճարները բերել վճարել ընկերութեան կեդրոնատեղին, որ է « Նոր Օր » ի խմբագրատունը, Պազար Մուրուրի մէջ, թիւ 38 խանութը:

Իրանը կը խնդրէ որ արգոյ ընկերները փութացնեն իրենց վճարումները, որպէս զի ձայն ունենան յառաջիկայ Յուլիս 1ի կիրակի օրուան Ընդհ. Ժողովոյ արտակարգ նիստին մէջ, որ տեղի պիտի ունենայ Գործ. Ժողովոյ ութամսեայ հաշուեկշիռը քննելու և ուրիշ կարևոր խնդիրներու վրայ խորհրդակցութիւններ կատարելու համար: ՆՈՐ ՕՐը յաջորդ թուով պիտի հրատարակէ Ընդհ. Ժողովոյ գումարումի վայրը, ժամը և օրակարգը:

ԻՐԱՆԻՆԻՔԻ 41րդ թիւին մէջ ծանուցուած էր թէ կը փնտռուի Կարապետ Սուքիասեան անուն Զմիկածազցի երիտասարդը: Կուգանք յայտարարել թէ՛ յիշեալը Գահիրէ կը գտնուի: Ի՞նչմը խմբագրութեանս. նամակատուի թիւ 117:

ԱՒԱՆԴԱՍԱՐ (ԷՄԱՆԷԹՃԻ) ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

ՇԱՐԷ ՄՕՀԱՄՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ ԷԼ ԽԱԿ, ԳԱՀԻՐԷ

Կ. Պոլսոյ մուսուլմանաւոր խմբարկի եով թիւ 81

Կը յայտարարէ արգոյ հասարակութեան թէ՛ Կ. Պոլսոյ Պաղչէ Գաբու, Թախանի թիւ 26 վաճառատունը բնակող և երկար ժամանակէ ի վեր իր փորձաւորութեամբ և ուղղամտութեամբ բոլոր պատուաւոր յաճախորդաց վստահութիւնը զբաւող եմանէրճի Աբրահամ էֆ. Պալթայեանի հետ ընկերակցութիւն մը կազմած է: Այսուհետեւ Կ. Պոլսէն Եգիպտոս և Եգիպտոսէն Կ. Պոլիս զրկուելիք ամեն տեսակ աւանդներ անկորուստ ու ապահով պիտի յանձնուին սահմանեալ տեղերին:

ՀԷԼՎԱՆԻ ՎԻՃԱՎԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns: Կիրակի 24 Յունիս 1900, 9366, 3739, 924, 702, 5261, 7683, 7353, 4418, 6277, 5189, 2553, 5877, 1176, 7366, 7862, 3636, 1389, 673, 5216, 9694, 8413, 7573, 2172, 4867, 6563, 9448, 7876

Տպագրութիւն Ա. ԻԱՒԻՆԵԱՆ — Պազար Մուրուր